

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր  
հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Ուսուցչուհի՝ Կարինե Հարությունյան

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

2023- 2024 ուստարի

## Բովանդակություն

Ներածություն-----	3
Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում -----	4
Եզրակացություն-----	14
Օգտագործված գրականության ցանկ-----	15

## Ներածություն

**Թեմայի կարևորությունը:** Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել Երկիր մոլորակի ամբողջականության և հավասարակշռության վերաբերյալ աշխարհահայացք ունեցող քաղաքացու ձևավորումը, ով կգիտակցի որ հասարակության կայուն զարգացման համար պետք է բնական էկոհամակարգի կայունություն, տնտեսության համաչափ զարգացում, համապատասխան սոցիալական պայմանների ապահովում:

Դրան կարելի է հասնել, եթե որպես զենք օգտագործվի կրթությունը հանուն կայուն զարգացման, որը կապահովի մարդկային հասարակության գոյատևումը բնական պայմանների ու պաշարների արդյունավետ օգտագործումը շրջակա միջավայրի որակի պահպանումը: Այդ կերպ էկոլոգիական մտածելակերպը կդառնա կենսակերպ և մշակույթ:

Բնապահպանական կրթության գլխավոր խնդիրը շրջակա միջավայրի բնապահպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացումն է: Իրազեկության տեսանկյունից թիրախային խմբերը բազմազան են: Սակայն, դրանցից ամենակարևոր խմբերից են երեխաները, քանի որ նրանք են հանդիսանում երկրի ապագան կերտողները: Բնապահպանական տարբեր թեմաների անդրադառնալու միջավայր են հանդիսանում տարրական և միջնակարգ դպրոցները, ինչպես նաև էկոակումբները:

**Թեմայի նպատակը:** Որպես բնապահպանական կրթության արդյունավետ ուսուցման կարևոր մեթոդ համարում ենք դասարանային պարապմունքների զուգահեռ կրթական միջոցառումների, ներառյալ էքսկուրսիաների, ճամբարների, դպրոցական խմբակների, շաբաթօրյակների, ծառատունկի և այլնի կազմակերպումը: Բարենպաստ եղանակին ուսուցիչը կարող է աշակերտների հետ ուսուցողական զրոսանք կատարել մոտակա գետ, լիճ, այգի, անտառ, գործարան կամ հանքավայր: Էքսկուրսիաների դերը կարևորվում է նրանով, որ աշակերտներն ամրապնդելով ստացած տեսական գիտելիքները՝ ձեռք են բերում նաև գործնական կարողություններ և հմտություններ:

## **Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր,**

### **կրթությունը և դաստիարակությունը դպրոցում**

Բնապահպանություն, երկիր մոլորակի բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման և ռացիոնալ օգտագործման չափերի ամբողջությունն, ինչպես նաև ֆլորայի ու ֆաունայի բազմազանությունը, ընդերքի հարստությունը, ջրերի և մթնոլորտային օդի մաքրությունը:

Երկրի առանձին շրջաններում բնական միջավայրի անշրջելի փոփոխությունների վտանգը ավելի է ընդարձակվել մարդու տնտեսական գուծունեության մասշտաբների հետ մեկտեղ: Բնապահպանության համաշխարհային միության տվյալներով (The World Conservation Union) 2008 թ. վերջին 500 տարում ամբողջովին բնաջնջվել են կենդանիների 844 տեսակ, իսկ կաթնասունների 23%-ը և թռչունների 16%-ը կանգնած են վերացման վտանգի առաջ: 80-ականների սկզբին միջինում կենդանիները վերանում էին ամեն օր մեկ տեսակ /ենթատեսակ, իսկ բույսերը ամեն շաբաթ: Ամեն տարի այրվում են համարյա 1 մլրդ. տ. պայմանական վառելիք և մթնոլորտ են արտանետվում միլիոնավոր տոննա ծծմբի ածխածնի, ազոտի օքսիդներ, որոնց մի մասը հետ է վերադառնում թթվային անձրևների, մրի, մոխրի, փոշու տեսքով (նայել մթնոլորտի աղտոտումը): Հողը և ջուրն աղտոտվում են արդյունաբերական և կենցաղային հոսքերի (հարյուրավոր միլիարդ տոննա), նավթամթերքների (մի քանի միլիոն տոննա), պարարտանյութերի (մոտ հարյուր միլիոն տոննա), պեստիցիդների, ծանր մետաղների, ռադիոակտիվ թափոնների միջոցով: Առկա է երկրի օգոնային շերտի քայքայման վտանգ (նայել Օզոնային անցք):

Մթնոլորտի ինքնամաքրման կարողությունն արդեն մոտ է սահմանին: Շրջակա միջավայրի անվերահսկելի փոփոխության վտանգը և դրա հետևանքով երկրի վրա կենդանի օրգանիզմների, այդ թվում և մարդու, գոյության վտանգը պահանջում էին բնության պահպանությանն ուղղված որոշակի չափանիշների մշակում՝ բնական ռեսուրսների ճիշտ օգտագործում: Այս միջոցներին են դասվում անթափոն տեխնոլոգիաների մաքրման շինությունների ստեղծումը, պեստիցիդների օգտագործման կարգավորումը, թունաքիմիկատների արտադրության դադարեցումը, հողատարածքների բարելավում, ինչպես նաև պահպանվող տարածքների (ազգային պարկեր, արգելանոցներ), հազվագյուտ և անհետացող կենդանիների և բույսերի բուծման կենտրոնների (այդ թվում երկրի գենոֆոնդի պահպանում) ստեղծում,

ազգային և համաշխարհային Կարմիր գրքի կազմում: Բնապահպանական միջոցները նախատեսված են հողային, անտառային, ջրային և այլ դաշնային օրենսդրություններում: Մի շարք երկրների պետական բնապահպանական ծրագրերի իրականացումը հնարավորություն է տալիս բարելավել շրջակա միջավայրի առանձին շրջանների որակը (օրինակ բազում տարիներ տևած և թանկ արժեք ունեցող մի ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր եղավ վերականգնել Մեծ լճերի ջրերի որակն ու մաքրությունը): Միջազգային մասշտաբով, միջազգային առանձին կազմակերպությունների ստեղծման հետ մեկտեղ, բնապահպանական առանձին խնդիրների վրա մեծ ազդեցություն ունի ՄԱԿ-ի ծրագիրը:

Վերջին տասնամյակներում ձևավորվել և բուռն զարգացում է ապրել գիտությունների մի ամբողջ համակարգ՝ Երկիր մոլորակի բնապահպանության և բնօգտագործման վերաբերյալ: «Մարդկության ինքնատշնչացման վտանգ», «բնապահպանական և բնօգտագործման հիմնախնդիր» հասկացությունները դարձել են համայն մարդկությանը հուզող հարցեր: Մարդը գոյատևում և ապահովում է իր հասարակական առաջընթացը՝ օգտվելով բնության բարիքներից: Մարդու վերաբերմունքը բնական միջավայրի նկատմամբ ի սկզբանե եղել է սպառողական, բայց այդ միջավայրի ինքնազարգացման և ինքնավերականգնման միջոցով «բուժվել են» մարդահարույց վնասները: Այժմ մարդու ակտիվ ներգործությունը բնական միջավայրի վրա այնպիսի ծավալներ է ընդունել, որ խախտվել է ինքնակարգավորման ու ինքնազարգացման ընթացքը (վերջին 30 տարվա ընթացքում բնությունից կորզվել և օգտագործվել է այնքան նյութական պաշար, որքան նախորդ 5000 տարվա ընթացքում):<sup>1</sup>

Հայաստանում բնաշխարհի վրա ներգործության հետևանքով փոփոխությունների մակարդակը համապատասխանում է բարձր քաղաքակենտրոնացված (ուրբանացված) և զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներին ու նկատելիորեն բարձր է հարևան երկրներից: Հանրապետության բնակչության 96%-ը կենտրոնացած է մինչև 2000 մ/բարձրությամբ բնակավայրերում, որը կազմում է երկրի տարածքի 60%-ը, որտեղ բնակչության խտությունը 171 մարդ/կմ<sup>2</sup> է, բնակավայրերի

---

<sup>1</sup> 1.Ասատրյան Լ. Թ., Սարգսյան Փ. Ա., Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, Երևան 2002թ.

խտությունը՝ մոտ 6 բնակավայր 100 կմ<sup>2</sup> վրա, ճանապարհային (երկաթուղային և ավտոմոբիլային) ցանցի խտությունը՝ 0, 85 կմ/կմ<sup>2</sup>:

Հանրապետության տարածքի 12, 7%-ն անտառածածկ է, իսկ 46, 8%-ն ընդգրկված է գյուղատնտեսական օգտագործման մեջ:

Հողի սեփականաշնորհումից հետո (1992) Հայաստանի հողային ֆոնդը բաժանված է շուրջ 334 հազար գյուղացիական տնտեսությունների ու մի քանի հարյուր պետական ու մասնավոր ոչ գյուղատնտեսական կազմակերպությունների միջև: Համապատասխան բնապահպանական միջոցառումներ չիրականացնելու դեպքում այդ հողերին սպառնում են քայքայումն ու բերրիության անկումը: Երկրագործական նպատակներով օգտագործվում են մինչև 2200 մ բարձրությունների և մինչև 16° թեքության լանջերի հողերը: Այդ ցուցանիշներին բավարարում է հանրապետության հողային ֆոնդի մոտ 40%-ը:

Հողերի քայքայման բնական և մարդահարույց պատճառները բազմազան են՝ Էրոզիա, հողերի պնդացում, աղակալում, սողանքներ, աղտոտվածություն, արոտավայրերի գերարածեցում և այլն:

Գյուղատնտեսական հողահանդակների գրեթե 60%-ը կազմում են արոտավայրերը և խոտհարքները, որոնց հիման վրա զարգանում է անասնապահությունը: Հայաստանի նման լեռնային երկրի համար բնորոշ է արոտային անասնապահության վարման վերընթաց գոտիական համակարգը:

Բնապահպանական տեսակետից անասնապահության սխալ կազմակերպումը (հիմնականում արոտավայրերի գերարածեցումը և մուտքային ու ելքային բազմաձյուղ ճանապարհների առաջացումը, որոնց պատճառով տրորվում և ոչնչանում է բուսածածկույթը) էական բացասական ազդեցություն են թողել Հայաստանի բնական ու մշակովի կենսահամակեցությունների (ալպյան ու մերձալպյան մարգագետնային, անտառային, տափաստանային և այլն) և դրանց կենսաբազմազանության վրա:

Մարդու գործունեության տևական և ակտիվ ներգործության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի աղքատացում և որակազրկում, բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Այդ երևույթը հատկապես կործանարար ազդեցություն է թողնում տարածման նեղ արեալ ունեցող կենդանատեսակների վրա: Ներկայումս վտանգավոր սահմանագծի է հասել Արաքսի

հովտի եզակի, խիստ յուրահատուկ սողունաշխարհը (հերպետոֆաունան): Սևանի ավազանից գրեթե անհետացել է խայտաբղետ մողեսի ենթատեսակի բնաշխարհիկ պոպուլացիան, որը միակն է Կովկասի բարձրադիր վայրերում: Նույն վիճակում է նաև փոքրասիական մողեսը:

Վերջին 50 տարիների ընթացքում կիսաանապատային և տափաստանային տարածքների ակտիվ յուրացման հետևանքով իրենց բնադրավայրերից դուրս են մղվել զանազան թռչուններ, մեծ, փոքր և գեղանի արոսները, սևափոր դոլոնը, կանաչ մեղվակերը: Տեղի է ունեցել ջրաճահճային էկոհամակարգերի ոչնչացում: Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով մերկացել են առափնյա ժայռերն ու մերձափնյա հատվածը, չորացել շրջակա ճահճուտները, վերացել են Սևանի իշխանի ձվադրավայրերի հիմնական մասը, բազմաթիվ ջրլող ու չվող թռչունների, կաթնասունների տեսակները: Սևանա և Արփի (անցյալում նաև Գիլլի) լճերն անփոխարինելի դեր ունեն ոչ միայն հանրապետության ճահճային թռչունների պահպանության, այլև հարևան երկրների ջրային ավազանների հետ օրգանական կապի պահպանման առումով, որով ապահովվում է հանրապետության տարածքում 145 տեսակ ջրլող և առափնյա թռչնատեսակների գոյությունը:

Անտառների անկանոն հատումների պատճառով շատ կաթնասուններ (օրինակ՝ կզաքիսը, հնդկական մացառախոզը, գորշ արջը, մուֆլոնը, անտառային կատուն և այլն) լքել են իրենց բնական կենսավայրերը:

Հայաստանում անտառները պետական սեփականություն են, և պետությունն է ապահովում անտառների պահպանությունը, օգտագործումը, վերականգնումն ու նոր անտառային տարածքների ստեղծումը: Օրենքով անտառահատում թույլատրվում է միայն անտառվերականգնման, սանիտարական և խնամքի նպատակներով:

Անտառների ոչ ճիշտ շահագործման հետևանքով արագանում ու խորանում են հողերի էրոզիան, անտառային գետերի ու ջրամբարների տղմակալումն ու «ծաղկումը», խախտվում անտառի ջրազրական ռեժիմը: Անտառային հողերում ջրի պակասի պատճառով տեղի են ունենում առավել խոնավասեր խոտան ծառատեսակների քանակական ու որակական փոփոխություններ: Սկսվում է անտառային հողերի կենսահամակեցությունների մարդահարույց հաջորդափոխություն (սուկցեսիա) և անտառների վերջնական դեգրադացիան՝

բնական անտառ → երկրորդային անտառ → դիֆուզ ցրված գաճաճ ծառատեսակներ → թփուտներ → անապատացում սխեմայով:

Հայաստանում մեծ մասշտաբների է հասել նաև արդյունաբերական բնօգտագործումը: 1920-ականների 2 տասնյակ փոքր ու միջին ձեռնարկությունների փոխարեն ներկայումս ավելի քան 200 բնակավայրում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք տեղադրված են մինչև 2000-2100 մ բարձրության լանդշաֆտային տարածքներում: Բնական պաշարների օգտագործումն ու դրանից ստացվող համախառն արտադրանքն աճել են հարյուրապատիկ՝ հիմնականում էքստենսիվ զարգացման ու բնական պաշարների անխնա շահագործման հաշվին, իսկ էկոլոգիական խնդիրները չեն կարևորվել: Հետևանքը եղել է այն, որ օտարվել են նոր հողատարածքներ, դեգրադացվել բնական լանդշաֆտներ, աղտոտվել են հողերը, օդային և ջրային ավազանները:

1987 թվականին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները մթնոլորտ են արտանետել առնվազն 245 հզ. տ շուրջ 50 տեսակի վնասակար նյութեր, որոնցից պինդ մասնիկներ՝ 54, 4 հզ. տ, գազային ու հեղուկ մասնիկներ՝ 190, 6 հզ. տ: Գազային արտանետումներում մեծ տոկոս են կազմել ծծմբի երկօքսիդը (58%), ազոտի օքսիդները (15%) և ածխածնի մոնօքսիդը (14%):

Ներկայումս (2006) արդյունաբերական ձեռնարկությունները գործում են իրենց հզորությունների 10-30%-ի չափով, որի հետևանքով մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը կտրուկ նվազել է և կազմում է տարեկան 15-20 հզ. տ:

Աղտոտված են նաև օդային ու ջրային ավազանները: Կան ջրավազաններ (օրինակ՝ Դեբեդ և Ողջի գետերի), որոնց ջրային բուսական ու կենդանական աշխարհները խիստ աղքատացել են գետը թափվող արդյունաբերական ջրերից: Իրենց բացասական ազդեցությամբ աչքի են ընկնում արդյունաբերության հատկապես մետաղաձուլական և քիմիական ճյուղերը: Չնայած վերջին շրջանում դրանց ծավալները զգալիորեն նվազել են, սակայն երկրի լանդշաֆտներին ու կենսաբազմազանությանը հասցրած վնասը զգալի է:

Մարդահարույց գործոնների ազդեցությամբ էկոհամակարգի կայունության և բնական հավասարակշռության խախտում, որը, որակապես փոխելով բնական միջավայրը, բացասական ազդեցություն է ունենում մարդու առողջության, բուսական



և կենդանական պաշարների պահպանության ու վերարտադրության վրա և հանգեցնում բնական միջավայրի, մթնոլորտի, ջրի աղտոտման:

**Բնության և հասարակության փոխհարաբերությունների լարվածությունն է, որն առաջանում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների անհամապատասխան գարգացման հետևանքով:**

Բնապահպանական ճգնաժամը բնութագրվում է ոչ միայն բնության վրա մարդու ազդեցության ուժեղացմամբ, այլև հասարակության գարգացման վրա մարդու վերափոխած բնության ազդեցության մեծացմամբ:

Սովորողները պետք է հիմնական դպրոցից ծանոթ լինեն էկոլոգիական խնդիրների հետ, փորձեն լուծել այնպիսի հիմնահարցեր, որոնք վերաբերվում է իրենց շրջապատին:<sup>2</sup>

Կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները, դպրոցում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները փոխանցեն ընտանիքի անդամներին և ընկերներին:

Բնապահպանական կրթությունը ոչ միայն գիտելիքների ձևավորում է, այլև գործնական կարողությունների գարգացում, իսկ ամենալավ միջոցը գործնական աշխատանքների կատարումն է՝ շարունակել ամենամյա ծառատունկը, թափոնների հավաքումը, դրանց երկրորդային մշակումն ու օգտագործումը, շրջապատի մաքրումը, համայնքային կառավարման մարմինների հետ կապերի հաստատումը:

Սովորողները իրազեկ լինեն օրգանական գյուղատնտեսության նշանակության մասին՝ շուկա-սննդամթերք-առողջ օրգանիզմ կապը ճիշտ պատկերացնելու համար:

### **Սովորողի ուսումնական գործունեության ձևերը**

1. *Ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում*
2. Ինքնավերլուծություն, զրույցներ, հարցազրույցներ տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների հետ
3. Զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն

<sup>2</sup>2.Белавина И.Г., Найдина Н.Г. Планета наш дом: Учеб.-хрестоматия для дошкольников и младших школьников И.Г. Белавина, Н.Г. Найдина. М.: Лайда, 1995. - 288 с.

3.Белавина И.Г., Найденская Н.Г. Планета наш дом. Мир вокруг нас: Методика проведения занятий по основам экологии для дошкольников и младших школьников И.Г. Белавина, Н.Г. Найденская. М.: Изд. «Лайда», 1995. - 96 с.

4. Դերային խաղեր
5. մասնագիտական փորձառություն
6. Խաղերի ու մրցույթների անցկացում
- 7 Հաշվետվությունների ու գրավոր հաղորդումների պատրաստում
8. մասնակցություն կլոր սեղանների
9. Թեստային աշխատանքների ու ստուգարքի անցկացում
10. Աշխատանք վիրտուալ գրադարաններում
11. Ուսումնահետազոտական աշխատանքների իրականացում
12. Հանրօգուտ աշխատանքների ծրագրերի իրականացում
13. Մասնակցություն էկոլոգիական հ/կ – ների հրապարակային գործողություններին

**Ուսումնական ճամփորդություններ**

1. Այցելություններ էկոլոգիական հիմնախնդիրների գոտիներ
2. Ձեռք բերված գիտելիքների հանրայնացում այլ կրթական հաստատություններում
3. Համալիր արշավներում սոցիալ – էկոլոգիական բաղադրիչի պարտադիր ներառում

**Դասի կազմակերպումը**

Նախատեսվում է դասընթացը կազմակերպել ակտիվ ուսուցման մեթոդներով: Հիմնական նյութը սովորողների կողմից յուրացվում է դասի ընթացքում: Դասի կազմակերպման հիմնական ձևերը տեսական և գործնական պարապմունքներն են: Համապատասխան թեման կարող է տրվել առարկայական առանձին մոդուլների միջոցով:

Սովորողները որպես առաջադրանքներ կատարում են ուսումնահետազոտական աշխատանքներ և ուսումնասիրություններ էկոլոգիական տարբեր թեմաններով:

Տարբեր հոսքերում թեմաների ընտրությունը կարող է լինել էապես տարբեր. այսպես, թարգմանչական դասարաններում կատարվում են թարգմանչական աշխատանքներ՝ օգտագործելով սովորողների համապատասխան ունակությունները, միաժամանակ դասը վարում է տվյալ օտար լեզվի ուսուցիչը էկոլոգիայի ուսուցչի ներկայությամբ: Դա նպաստում է այն բանին, որ սովորողները

ազատ կարող են ելույթներ ունենալ նաև ոչ հայախոս միջավայրում՝ տարբեր սեմինարների և հավաքների ժամանակ:

Ուսուցման ձևերից են նաև արտադասարանական աշխատանքները, միջոցառումները, էքսկուրսիանները և արշավների կազմակերպումը դեպի բնություն, հիդրոէլեկտրակայաններ, ջերմակայաններ, տարբեր արտադրական ձեռնարկություններ:

Ցուցահանդեսների և ակցիաների մասնակցություն և կազմակերպում:

### **Գնահատում**

Սովորողի գնահատումը կատարվում է ըստ իրականացված նախագծերի: Նախագծերի վերջնական արդյուքը սովորողը տեղադրում է իր բլոգում, որից հետո հղումը ուղարկում դասավանդողին: Սովորող է պարտավոր է մասնակցել կիսամյակի ընթացքում իրականացվող բոլոր առարկայական նախագծերին: Առավել քարձր են գնահատվում այն նախագծերը որենք ունեն գործնական ու կիրառական նշանակություն:

Վեց տարեկան երեխաներին ծանոթացնում են բույսերի, կենդանիների, անկենդան բնության երևույթների հետ, սովորեցնում են նրանց դրանք տարբերել տարածության մեջ, առանձնացնել և ճիշտ անվանել բույսի մի քանի հատկանիշները (ներկել տերևները, ծաղիկները), կենդանիների շարժումներն ու ձայները, անցկացնում են սկզբնական տեսողական կապեր և ընդհանրացումներ (ձուկը լողում է ջրում): Այս դեպքում երեխաների մոտ կատարելագործվում են վերլուծիչները (տեսողական, լսողական և այլն), զարգանում է ուշադրությունը և հետաքրքրությունը դիտարկվող օբյեկտների հանդեպ, նրանց հանդեպ ձևավորվում է բարեհամբյուր հարաբերություն:

Այս տարիքի երեխաների մոտ ձևավորվում է բնության և բնության երևույթների մասին պատկերացումներ, որոնց հետ նրանք անընդհատ բախվում են: Այսպիսի կապերը երեխաները կարող են ճանաչել առարկայական-զգացմունքային գործունեության ընթացքում պարապմունքների, խաղերի ժամանակ և դրանք արտացոլել հստակ ենթադրությունների մեջ:

Երեխաներին սովորեցնում են դիտարկել, առանձնացնել բույսերի, կենդանիների առանձին հատկանիշները, սահմանել դրանք, օգտվել սենսորային էտալոններից (գույն, ձև, մեծություն), համեմատել օբյեկտները և խմբավորել դրանք արտաքին նշաններով: Գիտելիքների յուրացման գործընթացում նրանց մոտ ձևավորվում են

Ճանաչողական գործունեության ավելի բարձր ձևեր. Ճանաչողության տեսողական-կերպարային մակարդակից 6 տարեկանում երեխաներն ունակ են անցնել պատճառահետևանքային հարաբերությունների հաստատմանը:

Նրանք կարող են յուրացնել ընդհանրական գիտելիքները, ինչը նպաստում է պատկերացումների, շրջապատող օրինաչափությունների, որոնք տեղի են ունենում բնության մեջ, ձևավորմանը: Երեխաներին սովորեցնում են առանձնացնել բույսերի, կենդանիների կառուցվածքի առանձնահատկությունները և հաստատել դրանց կախվածությունը գոյություն ունեցող պայմաններից:

Դպրոցական տարիքում երեխաների մոտ պետք է զարգացած լինի տրամաբանական մտածողության տարրական ձևը. վերլուծելու կարողություն, կարողանալ առանձնացնել բույսերի և կենդանիների անհատական և ընդհանուր հատկությունները և անել ընդհանրացումներ (օրինակ, ընդհանրացնել կենդանիների տարբեր խմբերը ըստ սնունդի, շարժման, ապրելու վայրի և այլն):

Երեխաների հետ անցկացնում են եզրահանգումներ, որ բնության երևույթները պայմանավորված են բնական պատճառներից (օրինակ, բույսերի և կենդանիների փոփոխությունները կախված են արևից, լույսից և ջերմությունից): Մինչև դպրոց գնալը երեխաների մոտ պետք է զարգանա դիտողականությունը, հետաքրքրասիրությունը, բնության հանդեպ սերը և հոգատարությունը, դրա մեջ գեղեցիկը գտնելու կարողությունը:

Դպրոցականներին բնության հետ ծանոթացնելը նրանց գիտակցության մեջ շրջակա միջավայրի մասին իրական գիտելիքների ուսուցման միջոց է, որոնք հիմնված են զգայական փորձի և բնության հանդեպ ճիշտ դաստիարակության վրա:

Բնությունը դպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և զարգացման կարևորագույն միջոցն է: Շփվելով բնության հետ երեխան անում է բազմաթիվ բացահայտումներ: Անկրկնելի է յուրաքանչյուր կենդանի էակ, որը տեսնում է երեխան: Շատ բազմազան են նաև բնության մատերիալները (ավազ, կավ, ջուր, ձյուն և այլն), որոնց հետ երեխաները շատ են սիրում խաղալ:

Դպրոցականները շփվում են շրջակա միջավայրի հետ տարվա տարբեր ժամանակահատվածում՝ երբ շուրջը ծածկված է փափուկ, սպիտակ ձյունով և երբ ծաղկում են այգիները: Երեխայի համար հատուկ նշանակություն ունի մեծահասակի դերը, երբ նա շփվում է բնության հետ, ում հետ միասին տեղի է ունենում երեխայի

ճանաչումը շրջապատող միջավայրին: Ոչ մի դիդակտիկ նյութ չենք կարող համեմատել բնության հետ՝ իր բազմազանությամբ և երեխայի զարգացման վրա ազդեցության ուժով: Բնության առարկաներն ու երևույթները տեսանելիորեն բացվում է երեխաների առաջ: Այսպիսով, երեխան անմիջականորեն, զգայական օրգանների միջոցով, ընկալում է բնության օբյեկտների բազմազան հատկությունները. ձևը, մեծությունը, ձայները, գույները, տարածության մեջ տեղադրությունը, շարժումը և այլն: Նրա մեջ ձևավորվում է բնության մասին սկզբնական կոնկրետ և պայծառ պատկերացումները, որոնք հետագայում օգնում են նրան տեսնել և հասկանալ բնության երևույթների կապը և հարաբերությունը, յուրացնում է նոր հասկացություններ: Բնության երևույթների միջև շատ կապեր և հարաբերություններ երեխաները ճանաչում են դիտարկման գործընթացում: Դա հնարավորություն է տալիս դաստիարակին երեխաների մոտ զարգացնել տրամաբանական մտածողությունը: Երեխաների շփումը շրջապատող միջավայրի հետ ունի նաև գաղափարա-աշխարհաճանաչողական նշանակություն: Իրական, ճշգրիտ պատկերացումների, բնության երևույթների փոխհարաբերության կապվածության կուտակումները ընկած է երեխաների մատերիալիստական աշխարհաճանաչման հաջորդական ձևավորման հիմքի վրա:

Շրջապատող միջավայրի օբյեկտների բազմազանությունը թույլ է տալիս դաստիարակին կազմակերպել երեխաների հետաքրքիր և օգտակար գործունեություն:<sup>3</sup>

---

<sup>3</sup> 1. Ասատրյան Լ. Թ., Սարգսյան Փ. Ա., Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, Երևան 2002թ.

2. Белавина И.Г., Найдина Н.Г. Планета наш дом: Учеб.-хрестоматия для дошкольников и младших школьников И.Г. Белавина, Н.Г. Найдина. М.: Лайда, 1995. - 288 с.

## Եզրակացություն

Ստանալով գիտելիքներ և կարողություններ դպրոցականներին առաջարկվում է օգտագործել դրանք պրակտիկայում. երեխաները խոնավեցնում են ավազը, թրջում են ձյունը ավելի ամուր շինվածք ստանալու համար, կավից պատրաստում են այնպիսի շինություններ, որպեսզի կարողանան պահել ջուրը: Այս գործունեության պրոցեսում տեղի է ունենում գիտելիքների հետագա կատարելագործում և մտավոր կարողությունների զարգացում:

Երեխայի անհատականության ձևավորման վրա դրական ազդեցություն ունի բնության մեջ աշխատանքը: Հենց այս աշխատանքն է տալիս երեխային զգալի և նշանակալի արդյունքներ: Խնամելով բույսեր և կենդանիներ երեխան բնության հանդեպ ցուցաբերում է հոգատարություն: Աշխատանքի մեջ կա ճանաչման ակտիվ գործընթաց և ստացված գիտելիքների օգտագործում: Բնության մեջ աշխատանքի պրոցեսում կոփվում է երեխայի առողջությունը, տեղի է ունենում նրա հոգեկանի զարգացում: Այս դեպքում շատ կարևոր է դաստիարակի դերը: Նա պետք է ստեղծի պայմաններ, որոնք կապահովեն երեխայի ակտիվությունը և ինքնուրույնությունը շրջապատող միջավայրի հետ ծանոթանալու ժամանակ:

Երեխայի անհատի զարգացման վրա բնության ազդեցությունը կապված է բնության երևույթների և օբյեկտների մասին նրա մոտ որոշակի գիտելիքների ձևավորմամբ:

Բնության հանդեպ սերը կարելի է դաստիարակել միայն գիտելիքների հիմքի վրա, ինչպես մենք արդեն նշել ենք, բույսերի և կենդանիների, նրանց կյանքի պայմանների, հիմնական պահանջմունքների, ինչպես նաև դրանց խնամքի նորարարությունների և կարողությունների մասին: Բնության հանդեպ ուշադիր վերաբերմունքի ձևավորումը աջակցում է նրա էսթետիկ ընկալումը: Բացի դրանից, բոլոր տարիքի դպրոցականներին անհրաժեշտ է դաստիարակել բնության հանդեպ ճանաչողական հարաբերությունը, որքան հնարավոր է ավելին իմանալու ցանկությունը:

Բնության մասին գիտելիքների խնդիրներն ու բովանդակությունը, երեխաների նորարարություններն ու կարողությունները ընդարձակվում և բարդանում են, երբ ցածր խմբից անցնում են բարձր խումբ: Ամեն տարիքային աստիճանում կատարելագործվում է ստացածը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Լ. Թ., Սարգսյան Փ. Ա., Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, Երևան 2002թ.
2. Белавина И.Г., Найдина Н.Г. Планета наш дом: Учеб.-хрестоматия для дошкольников и младших школьников И.Г. Белавина, Н.Г. Найдина. М.: Лайда, 1995. - 288 с.
3. Беладина И.Г., Найденская Н.Г. Планета наш дом. Мир вокруг нас: Методика проведения занятий по основам экологии для дошкольников и младших школьников И.Г. Беладина, Н.Г. Найденская. М.: Изд. «Лайда», 1995. - 96 с.